ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XII, № 5, 1959 Биологические науки

Պ. Պ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԾԱՎՈՐ ԵՂՋԵՐՎԻ ԱԿԼԻՄԱՏԻԶԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Դեռևս 1940 թվականին Ս. Կ. Դալը, որը այն ժամանակ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Կենսաբանական ինստիտուտի կենդանաբանության սեկտորի աշխատակից էր, կազմել էր զեկուցագիր՝ «Ծվյալներ Հայկական ՍՍՌ-ի որս-արդյունաբերական ֆաունայի վերափոխման հնարավորությունների վերաբերյալ», որտեղ Հայաստանում ակլիմատիզացիայի համար առաջարկված կենդանիների տեսակների մեջ նշված էր նաև ուսուրիական բծավոր եղջերուն: Վերջինս Ս. Կ. Դալը նպատակահարմար էր համարում բաց թողնել Ալավերդու, Շամշադինի, Իջևանի և Կիրովականի շրջանների անտառներում: Սակայն եղջերուների ներբերման հարցը ընդհատվեց միայն 1953 թվականին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի դիրեկտոր, հանգուցյալ Ա. Ա. Սարկիսովի կողմից, ընդորում պլանավորված էր եղջերուներին բաց թողնել ոչ թե հյուսիսային Հայաստանի անտառներում, ինչպես այդ առաջարկում էր Ս. Կ. Դալը, այլ այսպես կոչված Խոսրովի անտառում (Վեդու շրջան), որն ընկած է Երևանից դեպի հարավ-արևելք:

Խոսրովի անտառը հարավային տիպի նոսր անտառ է, որտեղ գերակշռում են կաղնու և բոխու անկարկները: Վերջիններս մերթ ընդ մերթ ընդմիջվում են գիհու անտառակներով: Անտառում կան շատ թփուտներ, ծառատեսակներից հանդիպում են հացենին, կեչին, արոսենին, տանձենին, խնձորենին, ալոճենին: Գետերի ու գետակների ափերին քիչ չեն ուռենիները, նախկին գյուղերի փլատակների մոտ հանդիպում են ընկուզենին և ծիրանին: Ռելիեֆը շատ կտրտված է մանր գետերի ու գետակների ձորերով: Անտառները տեղավորված են փոքր դանդվածներով, որոնք իրարից բաժանված են բացատներով ու մարգագետիններով: Ամբողջ անտառային դանդվածը գտնվում է ծովի մակարդակից 1200—1600 մ բարձրության վրա:

Քսան գլուխ (16 էգ և 4 արու) ուսուրիական բծավոր եղջերուներ Երևան են բերվել 1953 թ. նոյեմբերի վերջին: Ուսուրիական երկրամասից մինչև մեզ մոտ ճանապարհը նրանք անցել են լավ, միայն մի էգը ճանապարհին կուրացել է և տեղ հասնելու հաջորդ օրը ընկել: Քանի որ արդեն ուշ էր եղջերուներին տանել Խոսրովի անտառ, որտեղ նրանց ընդունելության համար ոչինչ չէր նախապատրաստված, ուստի եղջերուներին թողեցին ձմեռելու Երևանի Կենդանաբանական այգում, և միայն 1954 թ. մայիսի 25-ին 15 էգ և 4 արու բաց թողնվեցին Խոսրովի անտառում:

Եղջերուները անտառ էին տեղափոխվել բեռնատար ավտոմեքենաներով և ճանապարհին մի էգը խիստ վնասվել էր: Վերջինս հավանաբար ընկել էր նույն կամ հաջորդ օրը, քանի որ նրա դիակը անտառում գտնվել էր 5 օրից

հետո։ Բոլոր եղջերուները հասուն էին (4—6 տարեկան), իսկ բոլոր էգերը՝ հղի։ Բաց թողնելու գործը կազմակերպված էր ոչ այնքան հմտորեն, որի հետևանքով եղջերուները սկզբում խիստ վախեցած էին. նրանք բաժանվել էին մի քանի խմբերի և ցրվել տարբեր ուղղություններով։ Արուները, ըստ երևույթին, բաժանվել էին էգերից և իրենց համար համապատասխան ապրելավայր փնտրելով՝ մեծ տարածություններ էին անցել։ Հավանաբար դրանով պետք է բացատրել, որ բաց թողնելուց կարճ ժամանակ հետո 2 արու բռնվեցին Սևանա լճի ափին, բաց թողնելու կետից 60—70 կիլոմետր հեռավորության վրա (նկ. 1)։ Այդ արուներից մեկը հետագայում նորից տարվեց Խոսրով, իսկ մյուսը, գանգի տուփի վնասման պատճառով, թողնվեց Երևանի կենդանաբանական այգում։ Էգերը, հավանական է հղիության պատճառով, հենց սկզբից իրենց համար համապատասխան ապրելավայրեր էին որոնում։ Ընտրելով ամենախիտ ու անմատչելի անտառամասը (Ղուշ—Գալասի), նրանք հենց այստեղ էլ կենտրոնացել էին։ Իրենց մշտական ապրելավայրից ոչ հեռու, լեռան հիմքում, որտեղ նկատել էին ագի հետքեր, նրանք սկսել էին քանդել հողը։ Հետագայում այստեղ ստեղծվեց ագի արհեստական կուլտ, որի համար տեղափոխվեց կես տոննա քարաղ։

Արդեն հունիսի սկզբին երևացին այդ տարվա ծնված մատղաշները, իսկ հուլիսի վերջին—օգոստոսի սկզբներին եղջերուները փոքր խմբերով (3—5 գլուխ) սկսեցին կատարել ոչ մեծ անցումներ։ Դեպի արևելք նրանք հասնում էին մինչև Ալիմարգան տեղավայրը, իսկ դեպի արևմուտք՝ մինչև Մանգլուկ։ Սակայն ձմռան մոտերքին նրանք նորից կենտրոնացան Ղուշ-Գալասիում։

Եղջերուների լրացուցիչ կերի համար, խիստ ձյունոտ ձմռան դեպքում, նախապատրաստված էր խոտի 9 դեզ։ Սակայն 1954—55 թթ. ձմեռը շատ մեղմ էր, ձյունը քիչ, այնպես որ հարավային լանջերը ամբողջ ձմռան ընթացքում չծածկվեցին ձյունով, իսկ հյուսիսային լանջերում ձյան ծածկոցը ոչ մի տեղ չունեցավ 10 սմ-ից ավելի խորություն։

Ըստ երևույթին ձմռան մեղմության հետևանքով եղջերուները այդ ամբողջ ձմեռը անց են կացրել Ղուշ-Գալասիում։ Այդ ձմռան ընթացքում Խոսրովի անտառում չի նկատվել ոչ մի դայլ։ Լուսանի հետքեր նկատվել են մի քանի անգամ, բայց նրա կղզիանքում չեն հայտնաբերվել եղջերուների բրդի հետքեր։ 1955 թվականի գարնանը, մոտավոր հաշվումներով, եղջերուների թիվը Խոսրովի անտառում եղել է 25—26։

1955 թվականի ամռանը եղջերուները Խոսրովի անտառից հետո չեն անցել։ Ամենահեռու անցումները հասնում էին մինչև Ղալա-Դիրի և Զարգահայլա տեղամասերը։ Այս կետերը եղջերուներն այցելել են բավական կանոնավոր։ Արդեն հունիսի սկզբներին նկատվել էր երկրորդ բերը։

1955—1956 թթ. ձմեռը շատ խիստ էր, ձյան շերտը, նույնիսկ հարավային լանջերում, 50—60 սմ-ից ավելի էր, իսկ հյուսիսային լանջերում՝ հասնում էր մինչև 110 սմ-ի։ Եղջերուները հեռացել էին Ղուշ-Գալասիից և Խոսրով գետի ընթացքով իջել էին Ղարաբաղլար գյուղի շրջակայքը, որտեղ ձյունը զգալիորեն պակաս էր։ Ղարաբաղլար գյուղի շրջակայքը գերծ է անտառներից և այստեղ միշտ հանդիպում են դայլեր։ Այդ պատճառով 1956 թվականի գարնանը եղջերուները վերադարձան Խոսրովի անտառը։ Սակայն 1956 թվականի գարունը և ամառը եղջերուների համար առանձնապես անբարենպաստ էին։ Այդ գարունը առանձնապես շատ էին վայրի կանաչեղեն հա-

վաքողները, որոնցից շատերն անեին հրացաններ։ Սարերում խորը ձյունը մնում է բավական երկար, և ամառային արոտավայրերը տարվող անասունները երկար ժամանակ մնում էին Մոսրովի անտառից վեր գտնվող բաց տարածություններում։ Ցերեկը անտառի որոշ մասեր վեր էին ածվում արոտավայրերի, որովհետև անասուններն իջնում էին արածելու մինչև գետակներն ընկած ամբողջ տարածության վրա։ Հովիվներն ու քոչվորները կարում էին անտառը, հավաքում էին ցախը և միշտ կրակում էին, քանի որ ամեն մի քոչավայրում կար մի քանի հրացան։ Հնարավոր է, որ հենց այս մշտական ղղմակի հետևանքով եղջերուները հեռացան Ղուշ-Գայասիից և այլևս չվերադարձան այնտեղ մինչև 1956 թ. հունիսի վերջը։ Այս պատճառով 1956 թ. հուլիսին Կենդանաբանական ինստիտուտը հատուկ էքսպեդիցիա կազմակերպեց եղջերուների որոնման համար (նկ. 1)։ Սակայն, չնայած մանրակրկիտ որոնումներին, Գետնիի անտառապատության մեջ չհաջողվեց նշել ոչ մի եղջերու։ Եղջերուների կղկղանքը նկատվել էր մի քանի կետերում (Ղալա-գիբի, Ղուշ-Գայասի, Զարդախլու և այլն), բայց այս բոլոր հետքերը ունեին մոտ մեկ ամսվա հնություն։ Օգոստոսի սկզբներին 2 էգ բծավոր եղջերու նկատվել են անտառապահների կողմից Արդական գյուղի շրջակայքում, Մոսրովի անտառից 70—80 կմ հեռավորության վրա։ Կենդանաբանական ինստիտուտի պրակտիկանտ-ասանող Կ. Հ. Ալբումյանը նոյեմբերի 2-ից մինչև 6-ը շրջել է ամբողջ Մոսրովի անտառը, հատուկ ուշադրություն դարձնելով մերձափնյա անգամների վրա, որտեղ եղջերուների հետքերը կարող էին որոշակի նկատվել ձյան ծածկոցի վրա։ Սակայն եղջերուները ոչ մի տեղ չեն հայտնաբերվել։ Դեկտեմբերին (8—12) Կենդանաբանական ինստիտուտի կողմից նորից վերսկսվեցին եղջերուների որոնման աշխատանքները, որոնք այս անգամ ավարտվեցին հաջողությամբ. եղջերուները վերադարձել էին Մոսրովի անտառը։ Թարմ ձյունը նստելուց հետո կատարված հաշվառմամբ հայտնաբերվեց եղջերուների մի խումբ (տեսողական դիտողությամբ)՝ բաղկացած 23 գլխից, իսկ հետքերով նշվեց մի ուրիշ խումբ, որն ընդգրկում էր ոչ պակաս, քան 6 գլուխ։

Այս հաշվառումը ցույց էր տալիս, որ, չնայած 1956 թվականի անբարենպաստ պայմաններին, 30 գլխից ոչ պակաս եղջերուներ էին պահպանվել, դա եղջերուների հոտի համար լավ ցուցանիշ էր։

1957 թվականի գարնանը գրանցված էր եղջերուների չորրորդ բերը։ Ամռանը նրանք հիմնականում մնում էին Ղուշ-Գայասիում, որտեղ մնացին և 1957—58 թթ. ձմռանը։ Այդ ձմեռը դարձյալ շատ մեղմ էր։ Եղջերուները արածում էին ինչպես Ղուշ-Գայասիում, այնպես էլ Մոսրով գետի աջ ափին, Մոսրովի անտառից ավելի բարձր (նրանց թարմ թաքստոցները նկատված են ինչպես ձյան, այնպես էլ խոտերի վրա)։ Բացի այդ, եղջերուները միշտ նկատվել են նաև Ղալա-գիբիում և Զարդախլուում։

1958 թվականի գարնանը նորածինները առանձնապես հաճախակի գրանցվել են Մոսրովի անտառում։ Ինչպես մայիսին, այնպես էլ հունիսի սկզբներին մատդաշները մի քանի անգամ ցատկել են ուղղակի մարդկանց վրա։ Այսպես, Կենդանաբանական ինստիտուտի աշխատակից Մ. Ս. Ադամյանը հունիսի 4-ին բռնել էր մի նորածին եղջերու (որը պատկանում էր Մոսրովի անտառի եղջերուների հինգերորդ բերին)։

Չնայած որ եղջերուներին բաց թողնելու հենց առաջին տարվանից նրանց լրացուցիչ կերակրման համար խոտի դեղեր էին պատրաստվել, բայց

այդ խոտով սնվելու դեպքերը նշվել են միայն 1956—1957 թթ. ձմռանը, իսկ, հիմնականում, ձմռանը եղջերուները սնվել են թփերի, հատկապես մասուրի տարբեր տեսակների, խնձորենու, ուռենու, հացենու, կաղնու և այլ տեսակների ճյուղերով։ Նշվել է, որ եղջերուները ձյունը փորել են (մինչև 40 սմ խորությամբ) և սնվել նրա տակ գտնվող խոտով։ Աշնանը եղջերուները հաճախ փորում էին ծառերի տակ գտնվող փափուկ փտվածքը և սնվում շուշանազգիների հյութալի ցողուններով։

1958 թ. հունիսին լրացուցիչ կերպով բաց թողնվեցին Ուսուրիական երկրամասից բերված 19 եղջերուներ (5 արու և 14 էգ)։ Այդ խմբի բոլոր եղջերուները մի տարեկան էին։

Այս անգամ եղջերուները բաց էին թողնվել ավելի հանդիստ իրավրությունն պայմաններում։ Եղջերուները, առանց խմբերի բաժանվելու, դանդաղորեն անցան գետը և գնացին դեպի Դուշ-Գայասի։

1958 թ. հոկտեմբերի 21—25-ը Կենդանաբանական ինստիտուտի կողմից կազմակերպվեց Մոսրովի անտառի հետազոտումը, որի ժամանակ Դուշ-Գայասիի շրջակայքից հավաքվեց գայլի կղկղանք։ Կղկղանքի մի թարմ կույտում եղջերվի մեծ քանակությամբ մազեր հայտնաբերվեցին, մյուսում՝ նորածին եղջերվի սմբակներ և ֆալանգներ։ Կղկղանքի մյուս յոթ կույտերում հայտնաբերվեցին վայրի ալծի, վարազի, ընտանի ալծերի մազեր և ոչխարների բուրդ։ Բացի դրանից, Հանդգ յուղի շրջակայքում գտնվեց ընձառյուծի կղկղանքի երկու թարմ կույտ, որոնց մեջ նույնպես հայտնաբերվեցին եղջերուների մազեր։ Պարզվեց, որ գայլերի խմբից երկուսին սպանել էր Զարդախլոի անտառապահության աշխատակիցը հոկտեմբերի 14-ին։ Այսպիսով, ակնհայտ է, որ գայլերի ընտանիքը բնակություն էր հաստատել Մոսրովի անտառի մոտերքում և որ անտառ էր մտնում նաև ընձառյուծը։ Այս գիշատիչների առկայությունը լուրջ վտանգ էր ներկայացնում Մոսրովի անտառի եղջերուների գլխաքանակի համար։

Մոսրովի անտառում բծավոր եղջերուների հնգամյա բնակության փորձը ասում է այն մասին, որ նրանց ակլիմատիզացիան անցել է հաջող։ Սակայն այս արժեքավոր կենդանիների հոտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է մոտ ժամանակներում կիրառել Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի որոշումը արգելանոցների կազմակերպման վերաբերյալ։ Այդ արգելանոցների սահմաններում պետք է վերացվի ընտանի կենդանիների արածումը և վայրի կանաչեղենի հավաքումը։ Անհրաժեշտ է նաև անհապաղ կազմակերպել միջոցառումներ՝ Մոսրովի անտառում ընձառյուծի, գայլերի և լուսանների քանակը սահմանափակելու նպատակով։

Մոսրովի անտառի եղջերուների հոտի վիճակը պարզելու համար չափազանց անհրաժեշտ է ամեն տարի կատարել նրանց քանակի հաշվառում։ Ներկայումս սմբակավորների (արմատներների, սալգակների, եղջերուների և այլն) հաշվառման գործում սկսվում է ավելի շատ կիրառվել ավիացիան։ Հավանական է, որ խիստ կտրտված ռելիեֆ ունեցող անտառում ճշգրիտ հաշվառումներ կատարելու համար կարելի է օգտագործել ուղղաթիռ։ Հաշվառումները պետք է կատարել ձմռանը, երբ ծառերը մերկ են և ձյան վրա եղջերուները՝ առանձնապես նկատելի։

Ս. Կ. Դալը, առաջարկելով բծավոր եղջերուների ակլիմատիզացիան Հայկական ՍՍՌ-ում, կատարել էր Հայաստանի և Ուսուրիական երկրամասի



Рис. 1. Схематическая карта места акклиматизации и перебежек пятнистого оленя. 1—место выпуска 1958 г., 2—место выпуска 1954 г., 3—места поимки самцов оленей, 4—область краткосрочных переходов оленей 1954—1958 гг.

Նկ. 1. Բծավոր եղջերվի ակլիմատիզացիայի վայրի և անցումների սխեմատիկ քարտեզը։ 1—1958 թ. բաց թողնելու վայրը, 2—1954 թ. բաց թողնելու վայրը, 3—արու եղջերվի բռնելու վայրը, 4—1954—1958 թթ. եղջերվի կարճատև անցումների շրջան։

անտառների բուսականության, կլիմայի մանրամասն համեմատություն: Այս անալիզի հիման վրա Ս. Կ. Դալը առաջարկում էր եղջերուներին բաց թողնել Հայաստանի հյուսիսային անտառներում՝ Ալավերդու, Շամշադինի, Կիրովականի և Իջևանի շրջաններում: Բծավոր եղջերուների ակլիմատիզացիայի հաջողությունը Դոնների անտառապատության քսերոֆիտ անտառներում (որի մեջ է մտնում Խոսրովի անտառը), որոնք իրենց կլիմայով և բուսականությամբ քիչ են նման բծավոր եղջերուների հայրենիքին, թույլ է տալիս միանգամայն նպատակահարմար գտնել վերջիններիս լրացուցիչ բացթողումը Հայաստանի հյուսիսային անտառներում: Սակայն հնարավոր է, որ այդտեղ ավելի հարմար կլիներ կատարել կովկասյան ազնվացեղ եղջերվի ռեակլիմատիզացիան: Բծավոր եղջերուների բացթողումը Հայաստանի հյուսիսային անտառներում նպատակահարմար է նաև այն պատճառով, որ Դոնների անտառապատության անտառների տարածությունը շատ փոքր է (12.000 հեկտարից պակաս), և այդ անտառներում եղջերուների հոտի աճը խիստ սահմանափակ կլինի: Հյուսիսային Հայաստանի անտառների տարածությունը զգալիորեն մեծ է (մոտ 250.000 հեկտար), որը կնպաստի գլխաքանակի ավելացմանը:

Այսպիսով, բծավոր եղջերուների ակլիմատիզացիայի հետագա աշխատանքները պետք է տարվեն երեք ուղղությամբ՝ ա) եղջերուների պահպանման գործի կարգավորում և նրանց վերարերյալ գիտությունների կազմակերպում, բ) ակլիմատիզացիայի վայրերում գիշատիչների քանակի սահմանափակում, գ) ակլիմատիզացիայի նպատակով եղջերուների բացթողման շրջանների ընդարձակում՝ առաջին հերթին ի հաշիվ հյուսիսային Հայաստանի անտառների:

Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Կենդանաբանական
ինստիտուտ

Ստացվել է 8. IV — 1959 թ.

П. П. ГАМБАРЯН

ИТОГИ АККЛИМАТИЗАЦИИ УССУРИЙСКОГО ПЯТНИСТОГО ОЛЕНЯ В ХОСРОВСКОМ ЛЕСУ

Резюме

Еще в 1940 г. С. К. Далем, тогда сотрудником бывшего Сектора зоологии Биологического института Армянского филиала АН СССР, была составлена докладная записка: „Данные о возможности реконструкции охотничье-промысловой фауны Армянской ССР". Среди предполагаемых С. К. Далем для акклиматизации видов значился и пятнистый олень. Однако завоз оленей был организован лишь в 1953 г. директором Зоологического института АН АрмССР покойным А. А. Саркисовым. Олени были выпущены в Хосровском лесу.

Хосровский лес представляет мелкорослое редколесье южного типа с преобладанием дубово-грабовых насаждений, перемежающихся с рощами можжевельника. Лесные участки располагаются небольшими массивами, разделенными между собой полянами и лугами.

Пятнистые олени в количестве 20 голов (16 самок, 4 самца) прибыли в Ереван в конце ноября 1953 г. Одна из самок в дороге пала. На зиму олени были оставлены в Ереванском зоопарке и только 25 мая 1954 г. вывезены и выпущены в количестве 15 самок и 4 самцов в Хосровском лесу. Перевозка была совершена на грузовых машинах и в дороге одна самка была сильно побита. Ее труп был обнаружен в лесу через пять дней. Все самки были беременны (возраст от 4 до 6 лет). Выпуск был произведен несколько неумело, поэтому и олени с самого начала были сильно напуганы, разбились на несколько групп и бежали в разные стороны. Самцы, по-видимому, отделились от самок и в поисках подходящих местообитаний делали особенно большие перебежки, чем, вероятно, можно объяснить вылов через самое короткое время двух самцов в 70 км от точки выпуска на берегу озера Севан (рис. 1). Один из этих самцов вскоре вновь был выпущен в Хосровский лес. Самки, по-видимому, в связи с тем, что были беременны, с самого начала искали для себя подходящее место. Выбрав наиболее густой и влажный участок леса (Гуш-гаяси), они там и сконцентрировались. Недалеко от постоянного своего местопребывания они начали грызть землю под скалой с потеками солей. В этом месте в дальнейшем был создан искусственный солонец. Уже в начале июня появились прибылые, а в конце июля—начале августа олени небольшими группами по три, пять голов начали совершать небольшие переходы. На восток они доходили до местечка Алимардан, а на запад до Мангюка. Однако к зиме олени опять все сконцентрировались в Гуш-гаяси. Зима 1954 — 55 гг. была очень мягкая; южные склоны почти всю зиму были совсем без снега, а на северных снег почти нигде не превышал 10 см глубины. По-видимому, в связи с мягкостью зимы, олени всю зиму провели в урочище Гуш-гаяси. В эту зиму в Хосровском лесу не было зарегистрировано ни одного волка. Следы рыси отмечались не раз, но в кале рыси не отмечалось волос оленя.

Летом 1955 г. олени не уходили далеко из Хосровского леса. Наиболее дальние заходы приходились на местечко Кала-диби и урочище Чардахлу. В начале июня был зарегистрирован второй приплод.

Зима 1955—56 г. была очень суровой, даже на южных склонах снег лежал слоем свыше 50—60 см, а на северных достигал даже 110 см. Олени спустились по речке Хосров до сел. Карабахлар, где нет леса и постоянно встречаются волки. Весной 1956 г. они снова вернулись в Хосровский лес. Однако весна и лето 1956 г. для оленей были особенно неблагоприятны. Весной был особенный наплыв сборщиков съедобных трав, многие из которых были вооружены ружьями. В горах лежал глубокий снег и скот, перегоняемый на летние пастбища, на продолжительное время задержался на открытых плато выше лесных участков Хосрова. Скотина паслась вплоть до речек. Пастухи рубили лес, постоянно стреляли. Видимо, все это послужило причиной того, что олени покинули Гуш-гаяси и долго не регистри-

ровались в Хосровском лесу. Поэтому в июле 1956 г. Зоологический институт организовал специальную экспедицию для поисков оленей. Однако на всем протяжении Гарнинского лесничества был зарегистрирован лишь старый кал оленей (более месячной давности). Не были найдены олени и со 2 по 6 ноября, когда были объезжены все речки. С 8 по 12 декабря был проведен учет по свежей пороше. В этот раз было зарегистрировано (визуально) 23 оленя и одновременно по следам следующая группа, в которой насчитано не меньше 6 оленей. Этот учет свидетельствует о том, что, несмотря на неблагоприятные условия 1956 г., оленей сохранилось не менее 30 голов.

Весной 1957 г. был зарегистрирован у оленей четвертый приплод. Летом они в основном держались в Гуш-гаяси, где и остались на зиму 1957—58 г., которая была очень мягкая. Весной 1958 г. прибылые пятого приплода постоянно регистрировались. Кроме того, олени постоянно отмечались как в Чардахлю, так и в Кала-диби. Хотя с первого же года для оленей ежегодно заготавливалось сено, однако только зимой 1956—57 г. были отмечены случаи использования оленями этого сена. В основном же зимой олени поедали ветви кустарников, особенно разные виды шиповника, ивы, боярышника и др. Отмечено раскапывание снега до 40 см глубиной и поедание травы из-под снега. Осенью нередко олени разгребали лесную подстилку и поедали сочные стебли лилейных.

В июне 1958 г. произведен дополнительный выпуск 19 оленей (рис. 1), привезенных из Уссурийского края (5 самцов и 14 самок). Все олени этой партии были годовалого возраста. На этот раз выпуск производился в спокойной обстановке. Не разбившись на группы, олени не торопясь перешли речку и попали в урочище Гуш-гаяси.

С 21 по 25 октября 1958 г. было организовано обследование Хосровского леса, во время которого был собран около Гуш-гаяси кал волка со значительным количеством волос оленя. Кроме того, в окрестностях с. Анд был найден кал леопарда с волосами оленей.

Опыт пятилетнего пребывания пятнистых оленей в Хосровском лесу говорит о том, что акклиматизация последних прошла успешно Однако для дальнейшего развития стада этих ценных зверей необходимо в организованном заповеднике ликвидировать пастьбу домашнего скота и сбор съедобных трав и организовать меры по ограничению численности волка, рыси и леопарда. Для учетов численности оленей необходимо проводить ежегодный учет их численности, для чего желательно использовать вертолет. С. К. Даль рекомендовал провести выпуск пятнистых оленей в северных лесах Армении—Алавердского, Шамшадинского, Кироваканского и Иджеванского районов. Успех акклиматизации пятнистого оленя в ксерофитных лесах Гарнинского лесничества, мало сходных по климату и растительности с родиной пятнистых оленей, позволяет считать вполне целесообразным дополнительный выпуск пятнистых оленей в северных лесах Армении. Однако вероятно, что еще целесообразнее в северных лесах Армении провести реакклиматизацию кавказского благородного оленя.